



ՍԱՀՄՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽՕՐԻՆԱԿԸ

Սաղմունքի ժողովածուն Հին Կտակարանի ամենատարածված գիրքն է և քրիստոնեական եկեղեցու համար իր ունեցած նշանակությամբ կարող է մրցել հույնիսկ Ավետարանների հետ: Դարեր շարունակ այն եղել է հավատացյալների սիրելի ընթերցարաններից մեկը, իսկ հոգևորականների կողմից սովորաբար անգիր է արվել: Համարյա ամենուրեք սաղմունքների բնագիրն իր ընդօրինակությունների թվով գրավում է առաջին տեղը Աստվածաշնչի գրքերի շարքում: Չկա ծիսական մի ժողովածու, որտեղ սաղմունքը ընդգրկված չլինեն, չկա եկեղեցու որևէ արարողություն, որը կատարվի առանց նրանց մասնակցության: Սաղմունքի բարերար ազդեցության տակ է ծնունդ առել քրիստոնեական հոգևոր երգչերանց նմանողությամբ եմ գրված հայկական հրաշալի շարականներից շատերը: Անգիր արվելու հանգամանքը նպաստել է, որ սաղմունքի բնագիրը մեր պատմագրական երկերում ամենահաճախ հղվող աստվածաշնչյան գիրքը լինի: Սակայն, չնայած իրենց մեծ նշանակությանը, սաղմունքը առայժմ հայագիտության հատուկ ուսումնասիրության առարկան չեն դարձել*: Սույն աշխատության նպատակն է՝ ընդհանուր գծերով վերհանել սաղմունքի հայերեն թարգմանության գլխավոր առանձնահատկությունները և լույս ափով նրա նախօրինակի հետ կապված էական խնդիրների վրա:

* Անշուշտ չի կարելի այստեղ չհիշատակել Բ. Մ. Չամչյանի հույակապ աշխատությունը (Մեկնություն Սաղմուսաց, Բ. Ա.—Ժ, Վենետիկ, 1815—1823), որն իր պարունակած բազմաթիվ բանասիրական ճշգրտումների շնորհիվ կարող է հուսալի ուղեցույց հանդիսանալ սաղմունքի հայերեն թարգմանության բնական բնագրի պատրաստման և ընդհանրապես նրա հետագա համակողմանի ուսումնասիրման գործում:

1. ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ինչպես հայտնի է, Աստվածաշնչի հայերեն թարգմանության առայժմ ամենավատահույս հրատարակությունը Ջոհրայանինն է, միակը, որ պատրաստված է զգալի թվով ձեռագրերի համեմատությամբ¹: Միայն Հին Կտակարանի համար Ջոհրայանն օգտագործել է ութ ձեռագիր՝ հիմք ընդունելով Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 1 Աստվածաշունչը, գրչագրված 1319 թ.: Նախագաղափար օրինակը վերարտադրված է հարազատորեն, առանց հեղինակային միջամտության, իսկ մյուս ձեռագրերի տվյալները տեղ են գտել միայն տողատակում: Սա ցույց է տալիս, որ Ջոհրայանը Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկզբնական բնագիրը վերականգնելու նպատակ չի հետապնդել: Այսպիսի ձեռնարկում 1860 թ. կատարեց Բ. Արսեն Բագրատունին, տարբեր ընդօրինակություններից կազմելով հայերեն Աստվածաշնչի մի ընդհանուր բնագիր²: Սակայն որքան էլ Բագրատունու փորձը հաջողված լինի³, մինևույն է, բանասիրական ուսումնասիրությունների համար միակ պիտանի բնագիրը մնում է Ջոհրայանի հրատարակածը, քանի որ այստեղ ձեռագրական տվյալները մատուցված են իրենց անադարտ ձևով⁴: Ավե-

¹ Աստուածաշունչ Մատենան Հին և Նոր Կտակարանաց, յաշխատասիրութեան՝ Լ. Ջոհրայան վարդապետի, Վենետիկ, 1805:

² Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860:

³ Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյան, Աստուածաշնչի նոր հրատարակությունը, «Արարտ», 1902, էջ 1077:

⁴ Ինչ վերաբերում է Աստվածաշնչի կուսանդնուպոլսյան հրատարակությանը (Աստուածաշունչ Մատենան Հին և Նոր Կտակարանաց, Կ. Պոլիս,

լին, հիմքեր կան ենթադրելու, որ Չոհրապետի հրատարակությունը, չնայած օգտագործած ձեռագրերի փոքր քանակին, ըստ էության ճիշտ պատկերացում է տալիս Աստվածաշնչի հայերեն բնագրի ձեռագրական ավանդույթի մասին: Այսպես, Մաշտոցյան Մատենադարանի պատահաբար ընտրված № 195 ձեռագրի (1284/8 թ.) ուսումնասիրությունը պարզում է, որ այն պարունակում է սաղմոսների հայերեն թարգմանության սկզբնական բնագիրը վերականգնելու տեսակետից ուշադրության արժանի ընդամենը 9 բառային տարբերություն, որոնք չեն նշված Չոհրապետի մոտ: Դրանք են՝ Թ 18 չիք Տէր, ԽԱ 1 չիք Սաղմոս Ի Դախթ, ԽԱ 10 մոռացար փխ մերծեցեր, ՀԹ 1 Ասափայ փխ առացեալ, ԶԳ 6 չիք Տէր, ԶԸ 47 ունի Տէր, ԾԺ 4 չիք ուղղոց, ԾԽԴ 15 չիք տաա դու անցա և կերակրին, ԾԽԴ 20 չիք Տէր: № 142 ձեռագիրը (1269 թ.) տալիս է այս կարգի 18 ընթերցված, որոնցից 15-ը սաղմոսների վերնագրերում (ԻԲ, ԻԳ, ԻԹ, ԼԴ, ԼԸ, ԽԱ, ԽԲ, ԽԳ, ԾԸ, ԿԱ, ՀԹ, ԾԽԳ, ԾԽԴ, ԾԽԹ, ԾԾԱ) և միայն երեք բուն բնագրում՝ ԽԱ 10 մոռացար փխ մերծեցեր, ԾԺԷ 8 ունի զի բարի է, ԾԺԸ 106 չիք զամենայն: Վերնագրերի դեպքերին առանձնացնում ենք, քանի որ, ինչպես իր տեղում կտեսնենք, դրանք ոչ թե բնորոշ են սաղմոսների հայերեն թարգմանության ողջ բնագրին, այլ մեծ մասամբ արդյունք են հետագա խմբագրման: Նշված ձեռագրերի մյուս տարբերությունները ընդհանուր առմամբ զուտ գրչական են՝ մեծ տառերի շփոթում, հոդերի, շաղկապների և դերանունների հավելում կամ բացթողում, բայի ժամանակների, գոյականի թվի և հոլովի փոփոխում և այլն:

Այնուամենայնիվ, չնայած իր արժանիքներին, Չոհրապետի հրատարակությունը արդի բանասիրության պահանջները լիովին չի կարող բավարարել: Նրա ընդգրկված սահմանափակ թվով ձեռագրերը համեմայն դեպս ի վիճակի չեն ներկայացնելու հայերեն Աստվածաշնչի ձեռագրական տվյալների ողջ հարըստությունը, մանավանդ որ շատ հնագույն ընդօրինակություններ դուրս են մնացել դրանցից: Միայն Մաշտոցյան Մատենադարանում պահպանվում է սաղմոսների հայերեն թարգմանության 255 ամբողջական ընդօրինակություն, չնաշված ծիսական գրքերի պարունակած հատվածները: Ընդօրինակությունների մի զգալի մասը ծագում է ԺԳ—ԺԴ դարերից: Ահա դրանց լիակատար ցանկը, որը քաղել ենք Օ. Եզանյանի «Մատենագիտական ուղեցույց Մաշտոցի անվան Մատենադարանի Աստվածաշունչ Գրքերի» անտիպ աշխատությունից:

1895), ապա այն բոլորովին չի կարող ծառայել հայերեն բնագրի քննության խնդրին:

Նախ ուզում ենք հեղինակին խորին շնորհակալություն հայտնել աշխատության ձեռագիրը սիրալիր կերպով մեզ տրամադրելու համար, ապա ատիթից օգտվելով, մասնագետների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ «Ուղեցույցի» շուտափույթ հրատարակությունը կարող է մեծ օգնություն ցույց տալ Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը զբաղվող

- №№ 142, Ժողովածու, 1269 թ., թ. 76բ—124բ.
- 177, Աստուածաշունչ, ԺԳ դ., թ. 286բ—324ա.
- 179, Ժողովածու, 1292 թ., թ. 256ա—280բ.
- 180, Աստուածաշունչ, 1295 թ., թ. 288ա—318բ.
- 182, Աստուածաշունչ, 1303/4 թ., թ. 320բ—361բ.
- 183, Աստուածաշունչ, 1808 թ., թ. 84ա—80բ.
- 184, Աստուածաշունչ, 1400/1 թ., թ. 127ա—144ա.
- 195, Մատուց Աստուածաշնչի, 1284/8 թ., թ. 275ա—381ա.
- 199, Մատուց Աստուածաշնչի, 1271 թ., թ. 30ա—107բ.
- 206, Աստուածաշունչ, 1318 թ., թ. 259ա—285ա.
- 287, Մատուց Աստուածաշնչի, 1258 թ., թ. 14բ—68բ.
- 345, Աստուածաշունչ, 1270 թ., թ. 404բ—439ա.
- 346, Աստուածաշունչ, 1390/1400 թթ., թ. 280ա—308ա.
- 352, Աստուածաշունչ, 1367/71 թթ., թ. 197ա—214բ.
- 353, Աստուածաշունչ, 1317 թ., թ. 310ա—338բ.
- 354, Աստուածաշունչ, ԺԴ դ., թ. 362ա—390ա.
- 1500, Ծաղցնախիթ, ԺԳ դ., թ. 270բ—285ա.
- 2627, Ժողովածու, 1338 թ., թ. 260բ—284ա.
- 2705, Աստուածաշունչ, 1368/1660 թթ., թ. 198բ—218բ.
- 4113, Աստուածաշունչ, 1334 թ., թ. 246բ—267ա.
- 3412, Սաղմոսարան, 1316 թ., թ. 4ա—267ա.
- 4244, Սաղմոսարան, ԺԴ դ., թ. 1ա—193բ.
- 5299, Սաղմոսարան, ԺԴ դ., թ. 1ա—169բ.
- 5580, Մատուց Հին Կտ., 1285 թ., թ. 26ա—81բ.
- 6230, Աստուածաշունչ, 1314 թ., թ. 258բ—281բ.
- 6473, Սաղմոսարան, Պատարագամատուց, 1298 թ., թ. 2ա—165ա.
- 6569, Աստուածաշունչ, ԺԴ դ., թ. 217ա—239բ.

բանասերներին, մանավանդ այժմ, երբ լիովին հատունացել է նրա քննական բնագրի պատրաստման հարցը: Ավելորդ չէ նշել, որ Լեդենի համալսարանը, նախքան Աստվածաշնչի ասորերեն բնագրի հրատարակմանը ձեռնարկելը, լույս ընծայեց վերջինիս ընդօրինակությունների ամբողջական ցուցակը. List of old Testament Peshitta manuscripts (preliminary issue), ed. by the Peshitta Institute Leiden university, Leiden, Brill, 1961. Ժիշտ է, հայերեն ստվածաշնչյան ձեռագրերի այդպիսի ցուցակ հրատարակվել է դեռևս 1902 թ., բայց այն արդեն հնացած է. տե՛ս Месроп Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902.

- 7605, Սաղմոսարան, ԺԴ դ., թ. 7ա—226բ.
- 9066, Սաղմոսարան, ԺԴ դ., թ. 1ա—200բ.
- 10118, Սաղմոսարան, 1821 թ., թ. 2ա—197ա.
- 10182, Ժողովածու, 1346 թ., թ. 244ա—328ա:

Ըստ երևույթին այս ձեռագրերի վրա պետք է ընկնի սաղմոսների հայերեն թարգմանության սկզբնական բնագրի վերականգնման ողջ ծանրությունը: Իսկ առայժմ, սույն աշխատության մեջ բոլոր համեմատությունների համար ստիպված ենք բավարարվել Ջոհրապյանի հրատարակությամբ, միայն թե ապահովության նպատակով հաշվի առնելով նաև Մատենադարանի №№ 142 և 195 ձեռագրերի տվյալները: Անհրաժեշտության դեպքում ստուգումներ ենք կատարել նաև սաղմոսների մի շարք այլ հնագույն ընդօրինակություններում: Ջոհրապյանի հրատարակության տողատակի և Մատենադարանի մշված երկու ձեռագրերի քննությունը թույլ է տալիս հավաստիացնել, որ հետագայում բազմաթիվ ձեռագրերի ընդգրկումը թեև անսարակույս փոփոխություններ կմտցնի բերվող օրինակների և փաստարկների մեջ, բայց աշխատության հիմնական եզրակացությունների վրա ըստ էության չի կարող ազդել:

Աստվածաշնչի հունարեն բնագրի առաջին գիտական հրատարակությունը, որը նպատակ էր դրել ընդգրկել Յոթանասնիցի գոյություն ունեցող բոլոր ձեռագրերը և տպագիրները, իրականացել է նույնպես անցյալ դարի սկզբին⁶: Այս հրատարակությունն էր, որ ավելի քան մեկ դար հաջողությամբ բավարարում էր աստվածաշնչյան բնագրագիտության պահանջները, թեև այնուհետև կատարվել էին Յոթանասնիցի քննական բնագրի պատրաստման ևս մի քանի փորձեր⁷: Վերջիններս, ի տարբերություն օքսֆորդյան հրատարակության, սկզբնական բնագրի վերականգնումը կապում էին միայն հնագույն (Դ—Ե դդ.) ձեռագրերի հետ, և իզուր չէ, որ արժանացել են բանասերների լուրջ քննադատության⁸: Հունարեն Աստվածաշնչի քննական բնագրի՝ գիտության արդի մակարդակին համապատասխանող հրատարակության նախաձեռնությունը պատկանում է Գյոթինգենյան գրական ակադեմիային, որը սկսած 1931 թվականից առանձին պրակներով պարբերաբար լույս է ընծայում Հին Կտակարանի գրքերը: Ար-

դեն հրապարակի վրա է ծրագրված հատորների կեսից ավելին, այդ թվում նաև սաղմոսների գիրքը՝ կրկնակ տպագրությամբ⁹: Վերջինիս բնագիրը կազմել է նշանավոր աստվածաշնչագետ-բնագրագետ Ալֆրեդ Ռալֆը: Հրատարակության համար օգտագործված է սաղմոսների 11 ամբողջական հնագույն ընդօրինակություն (Դ—Ժ դդ.), 50 ձեռագրական պատճիկ, 3 թարգմանական բնագիր (դպտերեն, լատիներեն և ասորերեն)¹⁰, եկեղեցական հայերի 20 մեկնություն, ավելացրած 100-ից ավելի այն ձեռագրերը, որոնք Ռալֆը համեմատել է ըստ օքսֆորդյան հրատարակության տողատակի: Սրանով ամենին էլ չի սպառվում սաղմոսների հունարեն բնագրի ընդօրինակությունների թիվը, որն ըստ Ռալֆի հասնում է ավելի քան 900-ի¹¹: Սակայն նրանց մեծագույն մասը ուշ շրջանի ձեռագրեր են և, ինչպես հավաստիացնում է հրատարակիչը, քննական բնագրի պատրաստման համար կարող էին միայն չնչին օգուտ բերել¹²: Սույն աշխատության մեջ օգտագործված է Ռալֆի պատրաստած բնագրի երկրորդ, վերանայված տպագրությունը: Համեմատված են նաև Թիշենդորֆի և Ալլոի հրատարակությունները:

Թեև Աստվածաշնչի ասորական Պեշիտտա կոչվող բնագրի ձեռագրերը հունականի և հայկականի համեմատ չստիպանց փոքր թիվ են կազմում, սակայն նրանք ունեն այն առավելությունը, որ ժամանակով ավելի մոտ են իրենց սկզբնական օրինակին: Մեզ հասած հունարեն և հայերեն հնագույն աստվածաշնչյան ձեռագրերը գրագրված են թարգմանության ժամանակից 600—800 տարի հետո, իսկ ասորականները՝ 300—400: Յոթանասնիցը թարգմանված է մ. թ. ա. Բ դարում, իսկ նրա հնագույն ընդօրինակությունները մ. թ. Դ—Ե դարերից են, հայերեն թարգմանությունը կատարված է մ. թ. Ե դարում և ներկայացված ԺԳ դարի հնագույն ընդօրինակություններով, մինչև ընդ մ. թ. Բ դարում թարգմանված Պեշիտտայի հնագույն ձեռագրերը պատկանում են Ե—Ջ դարերին: Այս է, ըստ երևույթին, պատճառը, որ ասորական աստվածաշնչյան ձեռագրերը ավելի միատարր են, և եղած հրատարակությունները իրարից էական չեն տարբերվում: Այդ է ցույց տալիս մասնավորապես սաղմոսների բնագրի համեմատությունը ըստ Պեշիտտայի երեք հրատարակության¹³, որոնցից ոչ մեկն էլ դժբախտաբար գիտական չէ: Աստվածաշնչի ասորերեն թարգմանության հրատար-

⁶ Vetus Testamentum Graecum cum varis lectionibus, ed. Holmes-Parsons, t. I-V, Oxonii, 1798-1827.

⁷ Vetus Testamentum Graece iuxta LXX Interpretes, ed. Constantinus de Tischendorf, ed. sexta, t. I-II, Lipsiae, 1880. The old Testament in Greek according to the Septuagint, ed. by H. B. Swete, v. I-III, 1887-1894 և այլն:

⁸ Ст'у б'амав'ап'раш'аку Иван Евсеев, Книга пророка Исаи в древне-славянском переводе, в 2-х частях, ч. II, СПб., 1897, стр. 3. Նաև՝ К. Л., Основные проблемы греческой и славянской библейской текстологии (о двух статьях И. Е. Евсеева), „Журнал Московской Патриархии“, 1974, № 1, стр. 77-79.

⁹ Septuaginta, Vetus Testamentum Graecum, v. X: Psalmi cum Odis, ed. Alfred Rahlf, Göttingen, I Auflage, 1931, II Auflage, 1967 (այսուհետև՝ Rahlf).

¹⁰ Պողոս Թևկացու կողմից 616/7 թ. հունարենից կատարված ասորերեն թարգմանությունը, որը չպետք է շփոթել երբայերենից թարգմանված Պեշիտտայի հետ:

¹¹ Rahlf, S. 61.

¹² Անդ:

րակությունը միայն այժմ է որվում գիտական հիմքերի վրա: 80-ական թթ. սկզբին Լեյդենի համալսարանը ասորական աստվածաշնչյան ձեռագրացուցակի լույսընծայումով ազդարարեց, որ այդ ուղղությանը որոշակի աշխատանքներ են տարվում: Ըստ երևույթին արդեն առանձին հատորներ պետք է հրատարակված լինեն: Ասպժմ մեզ հայտնի է միայն մեկը, որն ընդգրկում է Երգ երգոցը, Տուբիթը և Եզրասի 4 գրքերը¹⁴: Սույն աշխատության մեջ ասորական բնագրին վերաբերող համեմատությունները կատարել ենք ըստ լոնդոնյան բազմալեզու հրատարակության¹⁵: հաշվի առնելով նաև վերևում նշված մյուս երկու տպագիրները:

Բոլոր այն համեմատությունների դեպքում, երբ լրացուցիչ ստուգումների կարիք է զգացվել, դիմել ենք Աստվածաշնչի հայերեն և հունարեն Համարարեսների օգնությանը¹⁶:

2. Ն Ա Խ Օ Ր Ի Ն Ա Կ Ի Հ Ա Ր Յ Ը

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ուսումնասիրումը առայժմ ընթացել է մի հիմնական ուղղությանը՝ նրա նախօրինակի խնդրի քննությանը: Բոլոր հետազոտողները համամիտ են այն հարցում, որ Աստվածաշունչը հայերենի է թարգմանվել Ե դարի սկզբին և որոշ ժամանակ անց խմբագրվել ըստ ձևոր բերված ստույգ հունարեն օրինակների: Ինչ վերաբերում է առաջին, այսպես կոչված՝ փույթանակի թարգմանության սկզբնագրին, ապա այստեղ կարծիքները իրարից տարբերվում են: Բանասերների մի մասը պնդում է, որ առաջին թարգմանությունը կատարված է նույնպես հունարենից, մի ուրիշ մասը կողմնակից է ասորերենին, իսկ ըստ այլոց՝ Աստվածաշնչի որոշ գրքեր թարգմանվել են հունա-

րենից, որոշ գրքեր՝ ասորերենից: Ընդ որում, այս կարծիքները մեծ մասամբ հենվում են ոչ թե բնագրերի քննության, այլ հայ պատմագրության տեղեկությունների վրա¹⁷:

Սաղմունների մեզ հասած հայերեն բնագիրը անտարակույս թարգմանված է հունարենից: Բնագրական համեմատությունը ցույց է տալիս, որ հունական նախօրինակը հայերեն թարգմանության մեջ ըստ մեկնայնի հարազատորեն է վերարտադրված, թեև կան բացատրելի շեղումներ, որոնց մասին խոսք կլինի հետագայում: Ազատ թարգմանության դեպքերը առհասարակ են, բառերի դասավորության խախտումը՝ հազվադեպ: Լեզուն սառնո է, անկաշկանդ, պնդամեմայնիկ հանդիպում են սկզբնագրի ստրկական պատճենումից քիտղ անհարթություններ: Այսպես.

ԻԶ 2. Ի մերձենալ սո իս չարաց ուտել զմարմին իմ, անդիչք իմ և թշնամիք իմ անքա տկարացան և անկան (... oi θλιβόντες με και οι εχθροί μου αὐτοί...): Հմմտ. նաև ԻԲ 4:

Լ 8. Լեր իմ, Աստուած, պաշտպան և տուն ապալինի ապրեցուցանել զիս (շօմ ժօձալ մե):

ԼԳ 17. Երևար Տաուն ի վերայ չարագործաց, սատակել յերկր է զիշատակս անցա (շօմ ճօլալթօձալ էչ ԿԾ):... Հմմտ. նաև ԾԼ 17:

ԾԺԸ 178. Եղիցի ձևոն քո կեցուցանել զիս (շօմ ճօլալ շօլ շօլ շօլ շօլ շօլ): Հմմտ. նաև ԾԻԺ 2:

Ինչպես տեսնում ենք, նշված նախադասությունները հայերեն թարգմանությունը վերարտադրել է ոչ թե որպես իմաստային ամբողջություններ, այլ անդամատված, բառ առ բառ: Հետևյալ համարում շարահյուսական ստրկաբանությունը հայ թարգմանչին հասցրել է նույնիսկ իմաստի աղավաղման.

ՂԻ 11. Որպես երդումս ի բարկությունս իմում, թե մտցեն ի հանգիստ իմ (ei stesleuovzai):

Պետք է լինեն՝ «թե ոչ մտցեն»: Նույն կառուցվածքը ճիշտ է թարգմանված ԶԼ 86 և ԾԼԱ 2—3 համարներում:

Սկզբնագրի լեզուն մատնում են նաև սաղմունների հայերեն թարգմանության բազմաթիվ բառապատճենումները. ալլագունել (ՀԲ 21)¹⁸, ալլագի (ԾԺ 10), անբան (ԽԼ 18), անբիծ (Թ 8, ԺԴ 2), անբծություն (Լ 9), անգիտություն (ԻԴ 7), անգործ (ԾԼԸ 16), անդադար (ԾԻԳ 5), անզգամ (ԺԳ 1), անզգամություն (ԼԼ 8), անժառանգել (ԼԴ 12), անիրաւ (ԺԷ 49), անիրաւություն (ԺԶ 8), անմեղություն (ՀԷ 72),

¹⁷ Բացառություն են կազմում Ֆ. Կոնիքերի, Ֆ. Մակլերի, Ա. Լիոնի, Ա. Մերկի, Բ. Պ. Էսպայայանի և այլոց՝ Ավետարաններին նվիրված աշխատությունները և Բ. Ա. Կոզյանի ու Բ. Հ. Ուկլյանի ուսումնասիրությունները Մակաբայեցվոց և Երգ երգոց գրքերի մասին:

¹⁸ Նույն ենք միայն առաջին հիշատակումները: Երբ հղված է երկու համար, նշանակում է, հայերեն նույն բառին հունարենում համապատասխանում է երկու տարբեր բառ:

¹³ Biblia sacra polyglotta, ed. Brianus Waltonus, Londini, t. I-VI, 1657. Vetus Testamentum Syriace, ed. S. Lee, Londini, 1823. Ktāba qadiša d-diatēqe 'atīqtā (Vetus Testamentum Syriace), Urmae, 1852. Մեր ձեռքը չի անցել սաղմունների ասորերեն բնագրի համեմատական հրատարակությունը (հրատ. Thomas Dathe, Halle, 1788).

¹⁴ The old Testament in Syriac according to the Peshitta version, sample ed.: songs of songs-tobit-4 ezra, Leiden, Brill, 1966.

¹⁵ Նույն հրատարակությանը ենք համեմատել նաև արաբերեն թարգմանությունը, իսկ երբայական բնագրից օգտվել ենք ըստ հետևյալ տպագրության. Священные книги Ветхого Завета (еврейский текст с русским переводом), т. I, Вена, 1877, т. II, Берлин, 1913.

¹⁶ Համարարեստ Հին և Նոր Կտակարանաց, աշխատասիրություն թարգմանության, Աստվածատուրյան, Երուսաղեմ, 1895: A concordance to the Septuagint and the other greek versions of the Old Testament, by Edwin Hatch and Henry A. Redpath, II ed., vol. I-III, Graz-Austria, 1954.

անմիտ (ԽԼ 11, ՀԵ 6), անկայտ (Մ 8), անպիտանակ (ԺԳ 3), անջուր (ԿԲ 3), անջրդի (ՀԼ 17), անտես առնել (Թ 1), անօրէն (Ե 6), անօրէնութիւն (Ե 5), անօրինակ (ՀԳ 5), արագագիր (ԽԴ 2), արծաթապատ (ԿԼ 14), բազմածին (ՄԽԳ 13), բազումողորմ (ՁԵ 5), բարեկենդանութիւն (ԻԹ 7), երկայնամիտ (Լ 12), երկայրի (ՄԽԹ 6), գորհանապագ (Լ 12, ԻԴ 5), թերահաւատ (ԿԼ 19), թիկնամէշ (ԿԼ 17), խոտակեր (ՄԵ 20), խստասիրտ (Դ 3), կարճմըտութիւն (ՄԴ 9), հաստարմատ (ԽԼ 3), ձեռագործ (ՄԺԳ 4), ձեռակերտ (Լ 7), ձեռնակապ (ՄԽԹ 8), ձեռնկալու լինել (ԼՁ 24), մարդահաճոյ (ՄԲ 6), մեծաբան (ԺԱ 4), մեծաբանել (Թ 18, ՄԴ 13), մեծվալելչութիւն (Լ 2), միաբանութիւն (ՄԴ 15), միակրօն (ԿԼ 7), միամօր (ԻԴ 18), միամօրութիւն (ԻԱ 21), միեղջերու (ԻԱ 22), մրգապահ (ՀԼ 1), նորատունկ (ՄԻԼ 3), շանաճանճ (ՀԼ 45), ողջակէզ (ՍԹ 8), չարագործ (ԼԳ 17), պողպատեք (ՄՁ 34), սաղմոսարան (ԼԲ 2), վերնայարկ (ՄԳ 3), տասնադի (ԼԲ 2), տարածամ (ՄԺԼ 147), օրէնագէտ առնել (ԻԴ 8), օրէնադիր (Թ 21), օրհասարակ (ԼՁ 6): Իհարկեւ, չպետք է կարծել, որ բոլոր այս բառերը ստեղծվել են անմիջապէս սաղմոսների թարգմանության ժամանակ. շատերը կարող էին գոյություն ունենալ նաև դրանից առաջ: Կարևորը միայն այն է, որ նրանք պատեղ հանդես են գալիս իրենց հունարեն կաղապարների հանդիպակացությանը: Երբ, օրինակ, հայը ունի շանաճանճ հունարեն *κυνόμαζα* և ասորերեն *xašîmā*, կամ միակրօն՝ հունարեն *μονοθεϊσμός* և ասորերեն *yixidāyā* բառերի դիմաց, ապա պարզ է, որ բիւմ է հունարենից, քանի որ արան համապատասխանում է ոչ միայն իմաստով, այլ նաև ձևով: Հատուկ ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ թվարկված բառերից մի քանիսը Աստվածաշնչի հայերեն թարգմանության գրքերի մեջ վկայված են միայն սաղմոսներում: Դրանք են՝ **անբան**—*անօրէն*, **անգործ**—*անաշխատ*, **արագագիր**¹⁹—*չնոյնաբան*, **թիկնամէշ**—*բարեկենդան*, **խոտակեր**—*էծած չորտու*, **հաստարմատ**—*էծ ճիւղ*, **ձեռակերտ**²⁰—*բրտած շարժում*, **միակրօն**—*մոնոթեիստ*, **տասնադի**—*ձեռնարկ*: Հետաքրքիր պատճենում է նաև նախ անկանխ բառը, որը դրված է հունարեն *προπίπτω*-ի դիմաց (ՀԱ 9):

Հունական սկզբնագիրը հավաստող ավելի գործը փաստեր են թարգմանական թուրիմացությունները, որոնցից, ինչպես հայտնի է, համարյա ոչ մի թարգմանություն չի կարողացել խուսափել: Ընդ որում, նրանք քանակը նշանակություն չունի. մեկ-երկու դեպքն էլ բավական են ցույց տալու, թե որ լեզվից է կատարված թարգմանությունը: Սաղմոսների հայերեն բնագիրը մատուցում է այս կարգի չորս-հինգ օրինակ: Այսպես.

¹⁹ Կա նաև Բ Եզր. Է 6 համարում, բայց ծագում է, ըստ երևույթի, Սաղմ. ԽԴ 2-ից:

²⁰ Կա նաև Երբ. Բ 7 համարում, որը սակայն բացահորեն փոխադրված է Սաղմ. Լ 7-ից:

Լ 12. Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախառ դրացեաց իմոց յոյծ:

Յոթանամիցը արա փոխարեն ունի՝ *παρά πάντας τους εχθρούς μου ἐγενήθη ἡ ἐνείθεός καὶ τοῖς γείτοσιν μου σφίδρα*: Այսպիսով պարզվում է, որ թարգմանիչը *παρά* նախորդի բազմազան նշանակություններից ընտրել է **քան**-ը և ամբողջովին աղավաղել նախադասության իմաստը: Ընդ որում թարգմանության դեպքում պետք է լիներ. «Առ ամենայն թշնամիս իմ եղէ ես նախառ և դրացեաց իմոց յոյծ»:

ԼԴ 8. Հասցէ ի վերայ նոցա որոգայթ, գոր ոչ գիտացին. և որս գոր թաքուցին անցէ գոտս նոցա (xai ἡ θήρα. ἦν ἐκρυβαν. συλλαβέτω αὐτόσ):

Անմիջապէս աչքի է ընկնում, որ հայերեն թարգմանությունը մթազնել է նախադասության միտքը, քանի որ պարզ չէ, թե ինչ է նշանակում «որս գոր թաքուցին անցէ գոտս նոցա»: Հունարեն *θήρα* բառը իսկապէս նշանակում է որս, սակայն թարգմանիչը չի իմացել, որ այն ունի նաև **թակարդ**, որոգայթ իմաստը, որով տվյալ նախադասությունը արդեն հասկանալի է դառնում: Թարգմանիչն չի օգնել նույնիսկ այն, որ սաղմոսների Թ 16 համարում նույն նախադասությունը դրված է «որոգայթ» գոր թաքուցին անցէ գոտս նոցա՝ ձևով, որոգայթ, քանի որ պատեղ հունարեն *παγίς* բառը ունի որոշակի այդ իմաստը: Ի դեպ, Թ 16 և ԼԴ 8 համարների ընդհանրությունը հայտնի է եղել. վերջինս հայերեն բնագրում հունարեն *զնոսս* բառի փոխարեն ունի *գոտս նոցա*, որն անընդուն ծագում է Թ 16-ից²¹:

ՄԼ 8. Ի լարել աղղղան նորս տկարացին (ἐντενεῖ τὸ τρέπον αὐτόσ ἕως οὗ ἀπονεθροσταιν):

Հունարենը բառացի նշանակում է. «**էլարից** զաղղղ իւր մինչև տկարացին»: Ըստ երևույթի հունարեն *ἐντείνω* բայի սպառնի III դեմքը՝ *ἐντενεῖ* (լարիցէ) հայը կարդացել է անջատ *ἐν* և *τενεῖ* ու նախադասությունն իմաստավորել այլ կերպ: Դա հնարավոր է, որովհետև *ἐν* նախածանցը ունի նաև նախդրային գործածություն և առանձին նշանակում է «ի», իսկ *τενεῖ* բառը պահպանում է բայի արմատական իմաստը, մանավանդ որ նրա վերջավորությունն էլ հիշեցնում է եզակի տրականի կազմությունը:

ՀԼ 2. Արկին գդիակունս ծառայից քոց գէշ թոշնոց երկնից, և գմարմինս սրրոց քոց գազանաց երկրի:

Ընդգծված բառի փոխարեն մյուս բնագրերն ունեն **կերակուր** (*βρώματα*. ասոր. *mēkū'ā*), և սպասելի էր, որ հայերենում էլ այդպես լիներ: Նույն նախադասությունը ճիշտ է թարգմանված Երեմիայի գրքի

²¹ Հմմտ. սույն աշխատության 4-րդ՝ «Նմանակություն» դրվագը: Հ. Մ. Չամչյանը, անդրադառնալով ԼԴ 8 համարում որս փխ որոգայթ ընթերցվածին, տալիս է բոլորովին այլ բացատրություն. «Քանու որս դնի աստ փոխանակ որոգայթի կամ թակարթի. զի որսն կամ որսալն է գործ որոգայթի. և զի բազում անգամ գործն դնի փոխանակ պատճառին, ըստ այսմ և աստ որսն՝ որ է գործ որոգայթի, դնի փոխանակ նույն իսկ որոգայթի» (Ըզվ. աշխ., Բ. Գ, էջ 733—734):

ԼՊ 20 համարում. «Արկից գրիակունս անցս կերակուր թոշնոց երկնից և գազանաց երկրի»: Ուստի սաղմոսների բնագրի շեղման մեջ չի կարելի որևէ միտումնավորություն ենթադրել: Պարզապես թարգմանիչը շփոթել է հունարեն *βρώμα* (հոգն. *βρώματα*) «կերակուր» և *βρώμας* «գարշահոտություն» բառերը: Հետաքրքիր է, որ Խորենացին Ավատել է այս սխալը և իր Պատմության մի հատվածում ուղղել՝ կերակուր, սակայն հավատարիմ մնալով Աստվածաշնչի հայերեն թարգմանության հեղինակությանը, պահպանել է նաև գեշ բառը. «Բայց Մեհրուսան հրամայե՛ պակացան՝ գերդիցն պարուպաց կախել զկանաչս անխարարացն, մինչև մեղցին. և թողուլ անցկես ի կախաղանին զգիակունսն, զի լուծեալ անկցին՝ գեշ կերակուր լինել թոշնոց»²²:

ԸԼԸ 20. Ի հակառակություն և ի նախանձ, ստցեն ի անմիր գրադարս քո (ὅτι ἐρεῖς εἰς διελογισμόν. *լիքֆոնտաի εἰς ματαιότητα τὰς πόλεις σου*):

Այստեղ էլ հալը շփոթել է հունարեն *ἐρεῖς* «խօսեսցիս» և *ἐρεῖς* (*ἐρεῖς*) «լքն, հակառակություն» բառի հոգն. ուղղ.-հայց.) բառերը, ըստ երևույթին իր համար էլ չկարողանալով պարզել անխաղախության իմաստը: Դիտելի է, որ եթե վերացնենք Ազված հունարեն բառերի շեշտերը, որոնք ձեռագրերում հաճախ չեն դրվում, ապա նրանք գրությանը բացարձակապես անյանում են:

ԸԼԸ 16 համարում հայերեն թարգմանությունն ունի «ի տուէ մոլորեցան» մյուս բնագրերի ստեղծան *πλάσθησονται* բառի փոխարեն: Ծեղման պատճառը կրկին տարիմաստ բառերի գրության մեամությունն է՝ *πλάσθησονται* և *πλανηθήσονται*: Ի դեպ, նույն

սխալը հանդիպում է նաև սաղմոսների լատինական բնագրում²³: Այս հանգամանքը բնականաբար կարող է ենթադրել տալ, որ *πλανηθήσονται* ընթերցվածը եղել է նաև հունական բնագրի ձեռագրերում, սակայն հայերեն և լատիններեն թարգմանությունները հեշտությամբ կարող էին նաև նրանից և իրարից անկախ շփոթել Ազված բառերը:

Թվում է, թե քերված փաստերը բավական են համոզելու, որ սաղմոսների հայերեն թարգմանության մասին հայերեն լիակապես հունարեն բնագրին է²⁴:

²³ *Rahfs, LaR Aug. Lun* հ. Մ. Չամչյանի, հայերեն թարգմանության մեջ մոլորեցան բառի սակայությունը կարելի է բացատրել նրա հունական սկզբնագրում *πλανηθήσονται* ընթերցվածի գոյությանը (Ազվ. աշխ., հ. Ժ, էջ 581):

²⁴ Մի թարգմանական թյուրիմացություն էլ Ազել է Եղիշե վրդ. Դուրյանը և կրկնել Գ. Աբգարյանը (տե՛ս Ե. Դուրյան, Սրբագրություններ մեր անխմեաց Աստուածաշունչին վրայ, «Մասիս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1896, էջ 229: Գ. Աբգարյան, Սրբաբի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ, «Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 60—61): Ըստ նրանց՝ հայ թարգմանիչը ԽԳ 16 համարի *ἀλάτμα* «գին, փոխ, պարզ» բառը կարդացել է *ἀλάτμα* «աղաղակ»: Սակայն հունարեն բնագրի Ռաֆսի պատրաստած քննական հրատարակությունը ցույց է տալիս, որ ձեռագրերի մի մեծ խումբ ունի *ἀλάτμα* «աղաղակ» ընթերցվածը, և որ թյուրիմացության հեղինակը ոչ թե հայ թարգմանիչն է, այլ հույն գրիչներն են կամ խմբագիրները: Այս հարցում ըստ էության ճիշտ եզրակացության է հանգել դեռևս հ. Մ. Չամչյանը (թեև որոշ վերապահումով բացառված չհամարելով նաև հայ թարգմանիչի շփոթման հնարավորությունը). տե՛ս Ազվ. աշխ., հ. Ժ, էջ 219:

3. ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սաղմոսների հայերեն թարգմանության մեջ նկատվում է մի չափազանց հետաքրքիր երևույթ: Այնտեղ, որտեղ հունարենում և մյուս բնագրերում հիշատակվում են երաժշտական գործիքներ, հայերենը դրանց անվանումները փոխարինում է վերացական, «օրհնա-

բանական» բառերով: Այս տեսակետից հատկապես ուշագրավ է վերջին՝ 150-րդ սաղմոսը, որում հանդիպող երաժշտական գործիքների ինն անվանումներն էլ հայերեն թարգմանությունն արտահայտում է տվյալ սկզբունքով: Այսպես.

Հայերեն թարգմանություն

- ԸՄ 3. Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. Օրհնեցէք զնա սաղմոսփրք և օրհնութեամբ.
- ԸՄ 4. Օրհնեցէք զնա ցնծութեամբ. Գովեցէք զնա ուրախութեամբ.
- ԸՄ 5. Օրհնեցէք զնա ի բան քաղցունս. Օրհնեցէք զնա ի բարբառ լսելի:

Ցոթանանից և մյուս բնագրերը

- 3. ἐν ᾗψ ὁάλπιγγος (ի ձայն փողոյ) ἐν ψαλτηρίῳ καὶ κιθάρᾳ (սաղմոսարանս և բնարս)
- 4. ἐν τυμπάνῳ καὶ χορῶ (թմբկաւ և պարոք) ἐν χορδαῖς καὶ ὄργάνῳ (աղեօք և տաղաւ)
- 5. ἐν κυμβάλοις εὐήχοις (ի ծնծղալս քաղցունս) ἐν κυμβάλοις ἀλαλαγμοῦ (ի ծնծղալս ցնծութեան):

Նրև 150-րդ աղմոսն իր այս միտվածքում միայնակ լինելը, ապա երևույթը գուցե կարելի է լինել բացատրել ինչ-որ խմբագրի կամ գրչի քմահաճությանը: Սակայն աղմոսների հաշերեն թարգմանությունը մատուցում է ևս մոտ երեք տասնյակ նման դեպք՝ մի քանի մեկնելի բացատրություններով:

ԼԲ 2. Խոստովան եղերուք Տեսուն **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք-քնարաւ*), **տասնադէտ աղմոսարաւ** (= *փալտրիօ Ծեպչործօ*) աղմոս աւացէք նմա:

ԽԲ 4. Խոստովան եղէց քեզ **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք-քնարաւ*) Աստուած, Աստուած իմ:

ԽԶ 6. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր **ձայնի փողոյ** (= *են ֆօնդ զէլպիլլոս*):

ԽԸ 5. Բացից զառախ **օրհնութեան** (փխ. *են փալտրիօ* աղմոսարաւ) ի սկզբանէ:

ՄԶ 9. Զարթիք փառք իմ զարթիք **աղմոսիք** (փխ. *փալտրիօս- աղմոսարաւ*) և **օրհնութեամբ** (փխ. *չիծարք- քնար*):

ԿԷ 26. Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ի մէջ կուսանաց և զովչաց (փխ. *չեանծօն տօմբանստրիօն- կուսանաց թմբկահարաց*):

Հ 22. Սաղմոս աւացից քեզ **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք- քնարաւ*) սուրբը Իսրայելի:

Ձ 3. Առէք աղմոս և սուր **օրհնութիւն** (փխ. *տօմբանօն- թմբկ*), աղմոս աւացէք նմա ի ձայն **քաղցրութեան** (փխ. *փալտրիօս տերօնօն մետ չիծարք* աղմոսարաւ քաղցր հանդերձ քնարաւ):

Ձ 4. **Փող հարէք** (= *սալտիստէ*) ի գոլխս ամաց (Յոթանասնիցը ավելացնում է՝ *սալպիլլի- փողով*):

ՂԱ 4. **Տասնադէտ աղմոսարաւ** (= *են Ծեպչործօ փալտրիօ*) ի ձայն **օրհնութեան** (փխ. *են չիծարք քնարաւ*) զովել:

ՂԷ 5. Սաղմոս աւացէք Աստուծոյ մերում **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք- քնարաւ*), **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք- քնարաւ*) և ի ձայն աղմոսաց:

ՂԸ 6. Ի ձայն օրհնութեան կուծոյ **փողոյ** (= *են- զէլպիլլոս*), **օրհնութեամբ** ցնծութեամբ և ի ձայն **եղջեր փողոյ** (= *զալպիլլոս չեքաչնդէ*):

ՄԸ 3. Զարթիք **աղմոսիք** (փխ. *փալտրիօս- աղմոսարաւ*) և **օրհնութեամբ** (փխ. *չիծարք- քնար*): Հմտ. ՄԶ 9:

ՄԸ 2. Ի մէջ ուռեաց նոցա կախեցար **զկտակարանս** մեր (փխ. *ծրչանա- զտախդ*):

ՄԽԳ 9. **Տասնադէտ աղմոսարաւ** (= *են փալտրիօ Ծեպչործօ*) աղմոս աւացից քեզ: Հմտ. ԼԲ 2:

ՄԽԶ 7. Սաղմոս աւացէք նմա **օրհնութեամբ** (փխ. *են չիծարք- քնարաւ*):

ՄԽԹ 3. Օրհնեսցեն զամուս նորա **օրհնութեամբ** (փխ. *են չործօ- պարուք*), **աղմոսիք** (փխ. *են տօմբանօն- թմբկաւ*) և **օրհնութեամբ** (փխ. *փալտրիօ- -աղմոսարաւ*) աղմոս աւացեն նմա:

ՄՄԱ 2. Ձեռք իմ արարին **զաղմոսարաւ** (փխ. *ծրչանօն- զտախդ*), և մատուցեց իմ կազմեցին **զգործի օրհնութեան** (փխ. *փալտրիօս- աղմոսարաւ*):

Ինչպես տեսնում ենք, նկատված սկզբունքը այնքան հետևողական է կիրառված, որ այն չի կարելի կասել պատահականությունների, գրչական սխալների, խմբագրական միջամտությունների հետ: Առա-

ջին հալացքից զուտ բանասիրական թվացող այս հարցը առնչվում է մի ավելի ընդհանուր, հայ եկեղեցու պատմության համար կարևոր նշանակություն ունեցող խնդրի հետ:

Հայտնի է, որ քրիստոնեական եկեղեցին սկզբից ի վեր մերժել է նվագարանների մասնակցությունը պաշտոներգության մեջ: Ինչպես նշում է հ. Վ. Հացունի, «նախկին դարերու Հարք հակառակութիւն ունէին անոնց դէմ, որովհետև նախ հեթանոսաւ և ապա քրիստոնեայ մեծատանց ձեռներում մէջ դարձած էին հեշտաւեր մեղկութեան և անտակ նուագածութեան գործիներ»²⁵: Այս խնդրի նկատմամբ հայ եկեղեցու վերաբերմունքը առայժմ պարզված չէ:

Նույն հ. Վ. Հացունին, հենվելով Խորենացու, Փավստոսի վկայությունների և հ. Ղ. Ալիշանի մի տեղեկության վրա, եզրակացնում է, որ Դ.—Ե դարերում հողարկապիտոսյան ժամանակ Հայաստանում գործածվել են երաժշտական գործիքներ (փող, տավիղ, փանդիո, վին և այլն) և, որ այդ ավանդույթը շարունակվել է նաև հետագայում, չնայած արգելվել էր արդեն Ներսես Մեծ կաթողիկոսի կողմից: Այնուամենայնիվ հ. Վ. Հացունին նշում է. «Դիտելի է, որ յիշեալ պատմական գործիքները մինչև եկեղեցուց մէջ չեն մտած, կամ գոնէ չի պատմուիթ թէ մտած լինին»²⁶: Այդ պատճառով մի փոքր անհետևողական է թվում հենց հաջորդ էջում արտահայտված կարծիքը. «Հայ եկեղեցին իր սկզբնաորոտներէն մինչև վերջերը՝ սկզբամբ և իրապէս ընդունել է նուագարանաց գործածութիւնը հոգևոր պաշտամանց մէջ»²⁷: Սա, ըստ երևույթին, պետք է բացատրել հ. Վ. Հացունու հողվածի բնույթով, որ ոչ այնքան գիտական, որքան գործնական նպատակ էր հետապնդում արդարացնել նվագարանների գործածությունը հայ նոր եկեղեցում:

Հօգուտ հ. Վ. Հացունու արտահայտած կարծիքի նոր կովաններ է բերում Ն. Թահմիզյանը. «Դեռևս մի մեծ հարց է,—գրում է նա,—թե հայ եկեղեցին այս ժամանակներում (վաղ միջնադարում՝ Լ. Տ.-Պ.) հունականի օրինակով իրոք մերժել է գործիքային նվագի մասնակցությունը պաշտոներգության մեջ: Իրոք վաղ միջնադարյան հայ հեղինակների մի քանի ասույթներ ցույց են տալիս, որ եկեղեցին այս շրջանում ոչ միայն չի մերժել նվագարանների գործածությունը, այլև կարծես պաշտպանել է այն: Վերը ծանոթացանք Հովհ. Իմաստասերի (Օձնեցու՝ Լ. Տ.-Պ.) ցուցանչական խոսքերին (պարտ է ուսումնասիրացնել... նուագարանօք քնարահարու լինել երաժշտական հոգուց՝ Լ. Տ.-Պ.): Թեոդորոս Քոթեմալորը Աստվածածնին նվիրված իր գովեստում ասում է. «Ընդհանրական առաքելաշէն եկեղեցիք Քրիստոսի, փառատրողական երգաբանութեամբ, հոգեզուարճ նուագարանօք վերագոչեսցուք ի սերկեան աւուրս դասախմբութեամբ»: Եվ դեռ նրանից շատ առաջ

²⁵ Հ. Վ. Հացունի, Եկեղեցական երաժշտութեան մասին, «Բազմավէպ», 1917, էջ 207:

²⁶ Անդ, էջ 208:

²⁷ Անդ, էջ 209:

Մերոպ Մաշտոցը ապաշխարության շարականներից մեկում հորդորում է. «Հնչմամբ փողոյ, սաղմուսարանաւ և քնարի օրհնեցէք զՏէրն ի յերկինս», որ մեզ գաղտփար է տալիս նաև երեք գործիքից բաղկացած մի այլ, ուրույն անասմբի մասին²⁸:

Նախ և առաջ պետք է նշել, որ Օճնեցու և Քոթեմալորի կողմնակի վկայությունները ամենևին էլ չեն կարող պարզել հայ եկեղեցու դիրքը տվյալ հարցում, մասնավանդ Ե դարի համար: Այլևի որոշակի և կարելի է Մաշտոցի խոսքը, նախ որպես ժամանակակիցի տեղեկություն, երկրորդ՝ այն պատճառով, որ արտահայտված է հենց շարականի, այսինքն պաշ-

տոներգության մեջ: Սակայն մի չնկատված հանգամանք կասկածի տակ է դնում նաև այս վկայության օգտակարությունը: Պարզվում է, որ շարականի նշված տողը նույնությամբ քաղված է Սաղմ. ԾԾ 3-ից: Ընդ որում, անհնար է այդ կապը բացահայտել սաղմունքի հայերեն թարգմանության միջոցով, քանի որ, ինչպես տեսանք, վերջինս երաժշտական գործիքների անվանումները փոխարինում է այլևայլ վերացական օրհնաբանություններով: Նույնությունն անմիջապես ի հայտ է գալիս, երբ այդ տողը համեմատում ենք սաղմունքի հունարեն բնագրի հետ:

Մաշտոց	Սաղմունքի հայերեն թարգմանություն	Տրոսեանսից
<p>Հնչմամբ փողոյ սաղմոսարանաւ և քնարի. օրհնեցէք զՏէրն ի յերկինս²⁹:</p>	<p>ԾԾ 3. Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, Օրհնեցէք զնա սաղմոսիք և օրհնութեամբ:</p>	<p><i>αἰνεῖτε αὐτὸν ἐν ἴχθω σάλπιγγος. αἰνεῖτε αὐτὸν ἐν ψαλτερίῳ κιθάρᾳ.</i> Օրհնեցէք զնա հնչմամբ (= ի ձայն) փողոյ, օրհնեցէք զնա սաղմոսարանաւ և քնարաւ:</p>

Այսպիսով, հետազոտողները չեն նշում հայ եկեղեցու պաշտոներգության մեջ նվագարանների մասնակցությունը հաստատող որևէ ուղղակի և արժանահավատ վկայություն: Դրա կողքին սաղմունքի հայերեն թարգմանության հետևողականորեն իրականացված միտումը աներկբայելիորեն ապացուցում է, որ հայ եկեղեցում երաժշտական գործիքների գործածությունը մերժված է եղել³⁰:

Այնուամենայնիվ Մաշտոցի շարականի տվյալը մի հետաքրքիր միտք է հուշում: Ըստ երևույթին, ինչպես բոլոր այլալեզու բնագրերում, սաղմունքի հայերեն թարգմանության մեջ նույնպես երաժշտական գործիքների անվանումները սկզբնապես վերարտադրված են եղել համապատասխան հայերեն համարժեքներով: Հետագայում, Աստվածաշնչի հայերեն թարգմանության վերջնական սրբագրության ժամանակ, խմբագիրները նկատելով հակասությունը մի կողմից հայ եկեղեցու բուն գործիքի, մյուս կողմից՝ այն հանգամանքի միջև, որ սաղմունքում Աստծո փառաբանությանը մասնակցում են նաև երաժշտական գործիքներ, ստիպված են եղել պատշաճ ձևով քողարկել վերջիններիս հիշատակումները: Իսկ շարականներում այդպես էլ աննկատելիորեն մնացել է մի սկզբնական ընթերցված: Այդ են վկայում նաև սաղմունքի հայերեն թարգմանության մեջ պահ-

պանված երաժշտական գործիքների հատուկենան անվանումները՝ տասնադի սաղմոսարան (ԼԲ 2, ՂԱ 4, ԾԽԳ 9, ԾԾԱ 2) և փող (ԽԶ 6, Զ 4, ՂԷ 8): Սակայն արանց կողքին կան դեպքեր, երբ նույն անվանումները փոխարինված են այլ, անորոշ բառերով՝ օրհնութիւն (փխ սաղմոսարան՝ ԽԶ 5, ԾԽԹ 3), սաղմոս (փխ սաղմոսարան՝ ԾԶ 9, Զ 8, ԾԷ 3, ԾԾ 3), օրհնութիւն (փխ փող՝ ԾԾ 8): Թե ինչու է հանդուրժվել տասնադի սաղմոսարան անվանումը, պարզ է. ըստ երևույթին Հայաստանում այդպիսի գործիք չի եղել, և սաղմոսարան բառն էլ, կապված լինելով սաղմոս-ի հետ, հավատացյալների մոտ որևէ հիթանուական հիշողություն չի արթնացրել: Իսկ փողը, ինչպես հայտնի է, հնում ոչ այնքան նվագածության գործիք էր, որքան հանդիսությունների, տոնախմբությունների ազդանշան:

Դժվար չէ պատասխանել նաև այն հարցին, թե ինչու սաղմունքում երաժշտական գործիքների անվանումները տարափոխվել են, իսկ Աստվածաշնչի մյուս գրքերի հայերեն թարգմանության մեջ վերարտադրվել իրենց համարժեքներով: Օրինակ, Բ Թագ. Զ 5, «Եւ Դաւիթ և որդիքն Իսրայելի խաղային սուաքի տապանակին Տեսուն՝ տալօք և նուագարանօք զօրութեամբ, և երգովք, և քնարօք, և սրբնօք, և թմբկօք, և ծննդայիք, և փողովք», կամ՝ Դան. Գ 10. «Դու հրաման ետոր ամենայն մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ՝ զսրբնի՝ և զքնարի՝ և զտաղի՝ և նուագարանաց, և զամենայն ազգաց արուեստականաց» և այլն³¹: Հասկանալի է, որ սաղմունքում էին կազմում պաշտոներգության հիմնական բովանդակությունը, և այստեղ էր, որ առավել ցայտունությամբ պիտի երևար վերևում նշված հավատությունը:

²⁸ Ն. Թահմիզյան, Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «Լրարեր հասարակական գիտությունների», 1971, № 1, էջ 44:

²⁹ Չայնքաղ շարական, Կ. Պոլիս, 1852, էջ 128:

³⁰ Ի դեպ, դեռևս հ. Մ. Չամչյանն այսպես է բացատրել նշված միտումը. «...որոյ պատճառն ոչ այլ ինչ երկի լինի, բայց եթէ այս, զի ոչ գոյր յազգի մերում նուագարանօք սաղմունք» (նշվ. աշխ., հ. Թ, էջ 549. տե՛ս նաև, հ. Ա, էջ 120):

³¹ Հմմտ. նաև Բ Թագ. Զ 14. Ա. Մնաց. ԺԵ 16, 28. Դան. Գ 5, 7. ավելի մանրամասն տե՛ս Աստվածատուրյանի Համարարբառի քնար, տալիղ, փող, թմբուկ, ծննդա, սրինգ, նուագարան հոդվածները:

4. Ն Մ Ա Ն Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Սաղմոսների հայերեն թարգմանությունը հաճախ շեղվում է բոլոր մյուս բնագրերից և սալիս թարգմանչի ազատությամբ կամ գրչականորեն, իմաստալին երանգներով և բառերի նմանությամբ բոլորովին չբացատրվող ընթերցվածներ: Այսպես.

Լ 8. Յնծացաց և ուրախ եղէց ի փրկութեան քում (փխ չնի տօ չլէսի սոս- յողորմութեան քում):

ԼԴ 27. Յնծացեմ և ուրախ լիցիմ ի քեզ ամենեքեան... (մյուս բնագրերում չիք ամենեքեան):

ԽԱ 7. Անձն իմ յոյժ խոովեցաւ (փխ բրօս քաստօն զ փսչ զ մոս չտարչի) Կ-առ իս անձն իմ խոովեցաւ):

ԿԲ 12. Թագաւոր յուսացաւ ի Տէր (փխ քօփրանի չէտ- ուրախացի):

ՁԹ 14. Յնծացար և ուրախ եղար զամենայն աւորըս կենաց մերոց (փխ քն քնտալ տալս զմիօն զամենայն աւորս մեր):

ԾԳ 17. Անդ թոչունք երկնից ձագս հանցեմ (մյուս բնագրերում չիք երկնից):

Նման դեպքերը մեծ թիվ են կազմում և ստորև առանձին-առանձին կնշվեն: Ինչպես տեսնում ենք, շեղումներն այնքան նշանակալից են, որ չեն կարող պատահական համարվել: Համարաբարտային քննությունը ցույց է տալիս, որ դրանց աղբյուրը մույն ինքն՝ սաղմոսների հայերեն թարգմանությունն է: Պարզապես սաղմոսների նմանօրինակ բովանդակություն ունեցող հատվածները ազատորեն ազդել են մեկը մյուսին: Այսպես, Լ 8 սաղմոսի շեղումը բացատրվում է հետևյալ հատվածների ազդեցությամբ. Թ 16—ցնծացաց ի փրկութեան քում. ԺԲ 6—ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան քում. ԺԹ 6—ցնծացուք մեք ի փրկութեան քում. Ի 2— ի փրկութեան քում ցընծացել յոյժ. ԼԴ 9—ուրախ եղիցի ի փրկութեան անոր. Ծ 14—տուր ինձ ցնծութիւն փրկութեան. ԾԺԷ 15—ձայն ցնծութեան փրկութեան: ԼԴ 27 համարը մույնությամբ փոխադրված է ԼԹ 17 և ԿԹ 5 համարներից (ցնծացեմ և ուրախ լիցիմ ի քեզ ամենեքեան...), ԽԱ 7-ը՝ Զ 4-ից (անձն իմ յոյժ խոովեցաւ), ԿԲ 12-ը՝ Ի 8-ից (թագաւոր յուսացաւ ի Տէր): ՁԹ 14 համարի «զամենայն աւորս կենաց մերոց» արտահայտությունը քաղված է ԻԲ 2 և ԻԶ 4 համարներից (զամենայն աւորս կենաց իմոց): Եվ, վերջապես, ԾԳ 17 համարը կրել է ԾԳ 12-ի ազդեցությունը (անդ թոչունք երկնից բոյնս դիցեմ):

Ահա մասնակցած մյուս դեպքերը.

Բ 11. առաջի անրա փխ մնա (հմմտ. ԺԴ 4, ԺԷ 7, ԻԱ 30, ԿԷ 4, 5 և այլն):

Դ 9. Անջեցից և զարթեաց փխ Անջեցից և ի քում եղէց (հմմտ. Գ 6(“):

Զ 3. զանձն իմ փխ զիս (հմմտ. Զ 5, ԺԶ 13, ԻԴ 20, Լ 8 և այլն):

Զ 11. և խոովեցիմ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԶԲ 18):

Թ 4. իսկ ընդէ՛ր՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Թ 13):

Թ 18. երեսաց՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Ա 4):

ԺԳ 2. յամենայն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԲ 13, ԿԵ 5): Նույնը տե՛ս մաս ԽԴ 3 (զամենայն) և ԾԲ 3:

ԺԶ 5. զշաւիղս իմ ի ճանապարհի քում փխ զգնացս իմ ի շաւիղս քո (հմմտ. ԽԴ 19):

ԺԷ 7. աղօթից՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Ե 3, ԻԷ 6, Լ 23, ԾԺԴ 1 և այլն):

ԺԷ 51. ազգէ միճչև յազգ փխ յախտեանս (հմմտ. ԽԸ 12, ՀԱ 5, ՀԶ 9, ՁԹ 1 և այլն):

ԻԵ 12. մեծս՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԻԱ 26):

ԻԶ 3. ի քեզ Տէր՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Լ 2, 15, ԼԷ 16, ԾԴ 24 և այլն):

ԻԶ 12. ի ձեռս փխ յանձինս (հմմտ. Թ 14, Լ 6, Խ 3, ԾԵ 41, ԾԺԸ 121):

ԼԲ 12. Աստուած օգնական է մնա փխ Աստուած է անրա (հմմտ. ԾԱ 9, ԾԳ 6, ԾԸ 10, ԿԱ 9, ՀԷ 35 և այլն):

ԼԴ 8. զոտս անցա փխ զմոսա (հմմտ. Թ 16):

ԼԴ 27. մեծ է Աստուած փխ մեծացի Աստուած (հմմտ. ԽԷ 2, ՁԵ 10, ՁԸ 2, ՂԵ 4, ԾԽԴ 3, ԾԽԶ 5): Նույնը տե՛ս մաս ԼԹ 17, ԿԹ 5:

ԼԵ 10. յուսով երեսաց քոց փխ յուսով քով (հմմտ. Դ 7, ԽԳ 4, ՁԸ 16, ՁԹ 8):

ԼԶ 26. յախտեան՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԽԴ 3, ՀԱ 17, ՁԸ 37, ԾԱ 29):

ԼԶ 28. ի միասին՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԶ 38):

ԼԶ 38. հալածեցիմ փխ առսակեցիմ. զաւակ փխ մնացուածք (հմմտ. ԼԶ 28):

ԼԹ 4. Տեսուն Աստուծոյ փխ Աստուծոյ (սաղմոսների հայերեն թարգմանության մեջ 50 անգամ գործածված է Տէր Աստուած):

ԽԳ 8. թշնամեաց փխ Առեչաց (հմմտ. ԺԷ 18, 48, ԾԸ 2, ԾԽԲ 9):

ԽԿ 22. քննէ փխ գիտէ (հմմտ. Է 10):

ԽԵ 9. զնշանս և՛ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՀԷ 43, ԾԼԴ 9):

ԽԶ 8. մեծ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԽԶ 3, ԽԷ 3, ՂԴ 3):

ԽԷ 5. թագաւորութիւնք փխ թագաւորք (հմմտ. ԿԷ 33):

ԽԷ 11. ընդ ամենայն տիեզերս փխ ի ծագս երկրի (հմմտ. ՁԹ 2, ՂԴ 4):

ԽԹ 10. ամենայն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԽԸ 10):

ԽԹ 17. բանս բերանոյ իմոյ փխ բանս իմ (հմմտ. ԺԸ 15, ԼԵ 4, ԾԳ 4, ՀԷ 1 և այլն):

Ծ 19. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ փխ զսիրտ խոնարհ և ստապալալ (հմմտ. Ծ 12, 19):

ԾԲ 6. և յամօթ լիցիմ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԴ 4, 26):

ԿԱ 8. զօրութիւն փխ փրկութիւն (հմմտ. ԿԱ 12):

ԿԳ 5. ալնցիկ ոչ ուղիղ եմ սրտիս փխ զանբծմ (հմմտ. Է 11, Ժ 3, ԼԱ 11, ԿԳ 11 և այլն):

ԿԸ 5. և ատելիք իմ փխ ոչք հալածէիմ զիս (հմմտ. ԺԷ 18, 41, ԽԳ 8, 11, ՁԲ 3, ՁԸ 24):

ԿԼ 15. բազմաց՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԺԷ 17, ՀԶ 18, 20, ԾԶ 28, ԾԽԳ 7):

ԿԼ 16. խորոց՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԿԷ 28, ԿԼ 2, ԾԶ 24): Նույնը տե՛ս նաև Հ 20:

ԿԼ 36. շինեսցե՛ն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԿԼ 36):

Հ 17. զարդարությունն փխ զըքանչելի (հմմտ. ԼԴ 28, ԼԹ 10, ԽԹ 6, 16, Հ 15 և այլն):

Հ 20. մխիթարեցե՛ր փխ կենդանացուցե՛ր (հմմտ. Հ 21):

ՀԱ 12. զաղքատ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԶ 14, ԼԹ 18, Խ 2, ԿԹ 6, ՀԱ 18):

ՀԲ 20. և եղե՛ն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՀԲ 19):

ՀԳ 10. սուրբ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԲ 21, ՀԱ 19, ԾԲ 1, ԾԵ 47 և այլն): Նույնը տե՛ս նաև ՀԳ 18, 21:

ՀԶ 10. և կս՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՀԶ 8):

ՀԷ 17. բարկացուցի՛ն փխ դատնացուցի՛ն (հմմտ. ՀԷ 40):

ՀԸ 40. զբարձրեալն փխ զնա (հմմտ. ՀԷ 17):

ՀԹ 48. արար զնշանն և զարուեստս իւր յերկրի՛ն եգիպտացոց և ի դաշտի՛ն Տալամո փխ եր յեգիպտոս զնշանն իւր և զարուեստս իւր ի դաշտի՛ն Տալամո (հմմտ. ՀԷ 12):

ՀԺ 50. զգրտմտութի՛ն բարկութեան փխ շաղի բարկութեան (հմմտ. ՀԷ 49 և այլն):

ՀԻ 54. զվիճակ ծառանգութեան փխ չափով զծառանգութի՛նս (հմմտ. ՀԳ 2):

ՀԼ 58. դարձան՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՀԼ 41, 57):

ՁԱ 3. որբոյն և այրոյ փխ որբոյն և աղքատի (հմմտ. ԾԽԵ 9, նաև ԵԼք ԻԲ 22, Բ օր. ԺԴ 29, ԺԶ 11, ԻԳ 17 և այլն):

ՁԲ 8. ամենայ՛ն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԲ 8, 14, ՀԴ 4, ԴԷ 7):

ՁԳ 18. զողորմութի՛նս փխ զբարիս (հմմտ. ԿԵ 20, ՀԶ 9, ՁԸ 34):

ՁԴ 9. յախտեան՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՁԵ 12):

ՁԵ 14. ձեռն փխ աջ (հմմտ. Թ 12):

ՁԶ 47. դարձուցանես զերեսս քո փխ դառնաս (հմմտ. ԺԲ 1, ԻԶ 9, ԻԹ 8, ՁԷ 15 և այլն):

ՁԸ 58. Աստուած. յախտեմից՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Խ 14, ԾԵ 46):

ՁԹ 2. զամենայ՛ն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԴԴ 4):

ՁՐ 6. որպէս դալարի՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՁՐ 5):

ՁՑ 16. ձեռաց՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Թ 17, ԻԷ 5, ՁԹ 17, ԴԱ 5 և այլն):

Ղ 4. հովանի՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԺԶ 9, ԼԵ 8, ԾԶ 2, ԿԲ 8):

ՂԱ 6. մեծ եմ փխ մեծ եղե՛ն (հմմտ. ԾԳ 24):

ՂԱ 27. յախտեան՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Թ 8, Կ 8):

ՇԳ 28. ձեռաց՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԻԷ 2):

ՇԴ 29. զգետս փխ զջուրս (հմմտ. ՀԷ 44):

ՇԴ 39. ի տուէ... ի գիշերի փխ ի գիշերի (հմմտ. Ա 2, ԻԱ 3, ԽԱ 9, ԾԴ 11 և այլն):

ՇԴ 45. զվկայությունն փխ զարդարությունն (հմմտ. ՀԷ 56, ԴԼ 7, ԾԺԼ 88, 146, 167, 168):

ՇԵ 7. բարկացուցի՛ն փխ դառնացուցի՛ն (հմմտ. ՀԷ 40, 58, ԾԵ 16, 29 և այլն):

ՇԶ 11. ծով փխ ջուր (հմմտ. ՀԷ 58):

ՇԷ 44. ձայնի՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Ե 3, ԻԷ 6, Լ 28, ԾԺԴ 1 և այլն):

ՇԸ 17. յոյժ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԼԷ 7, 9, ԾԺԵ 10, ԾԽԱ 7):

ՇԹ 18. սիրոց փխ անձինք (հմմտ. ԾԶ 12):

ՇԹ 38. յերկիր ծարաւոս փխ ի ծարաւ (հմմտ. ԾԶ 35):

ՇԺ 7. արդարութի՛նս փխ ճշմարտութի՛նս (հմմտ. ՁԸ 15, ԴԳ 15, ԴԶ 2, ԴԼ 4 և այլն):

ՇԺԳ 5. զո՞ տեսեր՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԺԳ 8):

ՇԺԳ (8). յերկինս և յերկրի փխ յերկինս ի վեր, յերկինս և յերկրի (հմմտ. ԾԺԲ 6, ԾԼԴ 6):

ՇԺԸ 67. յոյժ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԺԸ 4):

ՇԺԸ 105. լոյս տայ շաղաց իմոց փխ լոյս շաղաց իմոց (հմմտ. ԺԲ 4, ԾԴ 39):

ՇԺԸ 181. անձն իմ՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ՁԳ 2, ԾԺԸ 20):

ՇԺԸ 158. զպատուիրանս փխ զխօսս (հմմտ. ՁԸ 32, ԾԺԸ 60, 63, 184, 168):

ՇԻ 2. եկեսցէ՛ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԻ 1):

ՇԻԹ 8. մեղութեանց փխ անօրէնութեանց (հմմտ. ԻԴ 22, ԼԳ 5, 7, 18, ԾԳ 9):

ՇԼԱ 5. յարկի՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԻԵ 8):

ՇԼԵ 10. զերկիրն եգիպտացոց փխ զեգիպտոս (հմմտ. ՀԷ 12, Ձ 6, 11):

ՇԼԵ 18. մեծ փխ կարմիր (հմմտ. ԾԳ 25):

ՇԼԸ 16. որ առաջնորդէր անցա փխ ի նոսա (հմմտ. ԾԼԸ 10, 24):

ՇԽԲ 7. յիճե՛ն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԽԱ 4)³²:

Նմանակությունը զգալի փոփոխություններ է առաջացրել նաև սաղմունների վերնագրերում: Այսպես, ԻԲ 1, ԼԴ 1 և ԾԹ 1 համարներում հայերեն թարգմանությունը բազմաթիվ այլ վերնագրերի ազդեցությամբ ավելացրել է ի կատարած, իսկ ԺԵ 1, ԾԴ 1 և ԾԼ 1 համարներում՝ սաղմոս բառը: ՀԴ սաղմոսի վերնագրում ՀԵ 1-ից փոխանցվել են առ սաղմոստանեայս, իսկ ընդհակառակն՝ մի ապականեր բա-

³² Սաղմունների հայերեն թարգմանությունը ունի նաև մի շեղում, որը կատարվել է, ըստ երևույթին, Աստվածաշնչի մյուս գրքերի ազդեցությամբ. ԼԸ 18. պանդուխտ եմ ես... Աժդեհ փխ պանդուխտ եմ ես (հմմտ. ԾՁԱ. ԻԳ 4, ԴԼտ. ԻԵ 28, Ա Մնաց. ԻԹ 15, Լ Պետ. Բ 11):

ները: ԽԸ 1 և ՂԷ 1-ը ստացել են **օրհնութեան** բա-
նը:

Նմանակության դեպքերի այսպիսի հաճախակի-
ությունը պետք է բացատրել այն հանգամանքով, որ
ատմոսներն անգիր են արվել, և առանձին արտահայ-
տությունների մույնությունն զգալը դժվարություն չի
հարուցել: Ընդ որում, հարկ է ենթադրել, որ այս գոր-
ծում կարևոր, եթե ոչ՝ վճռական, դեր են խաղացել գը-
րիչները: Դրա պերճախոս վկայությունն այն է, որ հա-
ճախ սաղմոսների հայերեն թարգմանության մեջ հու-
նարենին և մյուս բնագրերին համապատասխանող
ձևերի կողքին ձեռագրերը նշում են նաև նմանակու-
թյամբ ստեղծված տարբերակներ: Այսպես, օրի-
նակ, ԾԺԷ 26 համարի «և օրհնեցաք զբեզ ի տանէ
Տեառն» նախադասության փոխարեն Զոհրապյանի
հրատարակության որոշ ձեռագրեր տալիս են՝ «և
օրհնեցաք զբեզ յանուանէ Տեառն», մույնամալով
ԾԻԸ 8 համարին: Վերջինս, իր հերթին, ԾԺԷ 26 հա-
մարից առանձին ընդօրինակություններում ստացել է՝
ի տանէ փխ յանուանէ տարբերակով: ԽԳ 8
համարի «այլ դու փրկեցեր զմեզ ի թշնամեաց մե-
րոց» նախադասությունը որոշ ձեռագրեր նման այլ
հատվածների ազդեցությամբ դարձրել են «...ի ձե-
ռաց թշնամեաց մերոց» (հմմտ. ԺԷ 18, 48, ՄԸ 2,
ԾԽԲ 9): Իսկ ԾԻԹ 5 համարի «յուսացաւ աճճն իմ
ի Տէր» նախադասության փոխարեն ձեռագրերից ո-
մանք ունեն «յուսացաւ Իսրայել ի Տէր», որը բխում
է ԾԻԹ 7 կամ ԾԼ 3 համարից: Այսպիսի օրինակնե-
րը, որոնք, ինչպես նշվեց, հազվադեպ չեն, ցույց են
տալիս, որ նմանակությունը նշանակալից դեր է խա-
ղացել սաղմոսների հայերեն թարգմանության ձեռա-
գրական տարբերակների հարստացման գոր-
ծում³³:

Պետք է նշել սակայն, որ տվյալ երկուսը հայերեն
թարգմանության յուրահատկությունը չէ: Մյուս բնա-

³³ Հմմտ. նաև՝ Թ 4—Չ ոմանք՝ ոչ քննի փխ ոչ
խնդրի (Թ 13-ից), ԺԷ 21—Չ ոմանք՝ անքծութեան
փխ սրբութեան (Է 9-ից), ԻԱ 20—Չ ոմանք՝ զգթու-
թիւն փխ զօգնականութիւն (ԼԹ 12-ից) և այլն: Սաղ-
մոսների վերագրերում հմմտ. ՀԳ 1, ՀԷ 1, ՀԸ 1,

գրերում, թեկուզ ոչ մույն չափով, այն մույնպես դըր-
սելովրվում է: Ռալֆսի հրատարակության տողատա-
կում հազվագյուտ չեն այն դեպքերը, երբ որևէ տար-
բերակների համար հղվում է սաղմոսների մի այլ
հատված: Այսպիսով, ստացվում է այնպես, որ իրար
հետ բոլորովին կապ չունեցող երկու բնագրեր, նմա-
նակությամբ ազդվելով սաղմոսների միևնույն հատ-
վածից, կարող են շեղվել մյուս բնագրերից և որևէ
տարբերակներով ստեղծված մեկուսի մույնամալ: Օրինակ,
ԾԼԴ 8 համարում հայերեն թարգմանությունն ունի
«ո եհար զամենայն անդրանիկս եգիպտացոց»:
Ընդգծված բառը բացակայում է մյուս բնագրերում,
բացի, այսպես կոչված, վերինեգիպտական խմբա-
գրության երկու բնագրից: Վերջիններս հայերեն
թարգմանության հետ ոչ անմիջական, ոչ էլ, ըստ ե-
րեկույթին, միջնորդավորված կապ կարող են ունե-
ցաւ, քանի որ ներկայացնում են Յոթանասանից բնա-
գրի մի բոլորովին այլ խմբագրություն: Ուստի նը-
րանց մույնությունը պետք է բացատրել միմիայն այն
բանով, որ այս հատվածում նրանք իրարից անկախ,
հավասարապես ազդվել են սաղմոսների ՀԷ 51 հա-
մարից. «...եհար զամենայն անդրանիկս եգիպտաց-
ոց» (= *καὶ ἐπ' ἅπασαν τὴν γῆν ἄιγύπτου ἐν Αἰγύπτῳ*):
Նամ ԾԼԴ 9 համարի «տաքեաց զնշանս
և զարուեստս իր ի մէջ քո Եգիպտոս, ի փարաւովն
և յամենայն ծառայս իր» նախադասության ընդգըծ-
ված բառերի փոխարեն միայն հայերեն և արաբերեն
թարգմանությունները ԾԼԵ 15 համարի նմանակու-
թյամբ ունեն՝ «...յամենայն զօրս իր» (*Φερασ καὶ τῶν
δύναμιν αὐτοῦ*):

Ինչպես տեսնում ենք, այս հանգամանքը էական
նշանակություն ունի և անպայման պետք է հաշվի
առնվի տարբեր բնագրերի առնչակցությունը բացա-
հայտելու գործում:

(Շարունակելի)

ԾԽ 1, ԾԽԱ 1, ԾԽԴ 1 (այլաբանված է ի կատարած
բառը) և ՀԳ 1, ՀԷ 1-ի կատարած սաղմոս յԱսափ
փխ իմաստութիւն յԱսափ (ՀԴ 1, ՀԵ 1, ՀԶ 1 և այլ
համարներից):